

~~16662~~

Ա. Գ. ՐԱԶԵԴԵՎ

# ՀԱՅԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿ

"It is for you to urge upon all the necessity of placing yourselves in a position of an armed nation — a nation such as the Swiss, whose strength lies not in its numbers or in its military organisation, but in the spirit of those who love their country and are prepared to die for it".—

Lord Salisbury, 9 May, 1900.

Հրամ.

Տ. Օ. Գևորգյանի

1909

Ժ. Շ. Ե. Ե. Ա.

355.3  
4-29

355-3

4-29

2802-10

493

Ա. Կ. Ա. Ր. Ա. Ն. Դ. Ա. Ա. Զ.

# ՀԱՅԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿ

"It is for you to urge upon all the necessity of placing yourselves in a position of an armed nation — a nation such as the Swiss, whose strength lies not in its numbers or in its military organisation, but in the spirit of those who love their country and are prepared to die for it".

Lord Salisbury May 9, 1900.


16662

Հ Ր Ա Մ Տ

Հ. Յ. Պատմակովի քանակ

1909

Ժ. Բ. Կ. Ա. Զ.



08 AUG 2013

## I

## ՄԻԼԻՏԱՐԻ ՊԱՏՈՒՅԱՍԸ

---

Նոր օրենքը Տամիսատանում.—Զօրք և հայրենիմ.—Դէպի աստիճանական ռամկալարացում.—Միլիտարիզմը Արևմտւթում և Թիւրքիայում.—Զինաւորուսն համանարակ տենր, երա պատճառները.—Սպառողէն խաղաղութիւն, — Ժամանակակից զօրք, իբրև կապիտակմի տաների նեցուկ.

---

Զինւորագրութեան օրէնքն ընդունւեց, Ամբողջ Օսմանեան երկիրը պիտի ներկայացնէ այսուհետեւ մի ձոյլ բանակ, կազմւած իր բոլոր կենսատու տարրերից, առանց խորութեան ցեղի, կըօնի ու գաւանանքի: Միքայլ ևս արւեց գէպի երկրի Խաղաղացումը, գէպի նրաներքին կազմաւորումն ու վերաշինումը: Գա ար գար ութեան յաղթանակն է և միանգամայն բանականի առաջնորդութեան:

Երանի՛ սխալւած չը լինէինք մեր յոյսերի մէջ և այդ արդարութիւնը չը բռնաբարւէր ապագայում նոր, յետագէմ որոշումներով կամ անիրաւ սահմանափակումներով: Օսմանեան պարլամենտի մեծամասնութիւնը կազմող անհատները, տարաբախտաբար, նոյնքան գիւրութեամբ փոփոխում են իրենց կարևոր որոշումները,



որքան դիւրութեամբ ուտում են, խմում... Առ այժմ փաստը հրապարակի վրայ է, օրէնքն արդէն քւէարկւած է և նա մէկն է այն սակաւաթիւ լուսաւոր կէտերից, որոնք փայլփլում են խակ ու յետադէմ որոշումների մուլթ հօրիզոնում...

Զի՞ն ւոր ակ ան վեր ակ ազմ ութեան ծանրակշիռ խնդիրը գրւում է երկրի մտաւորական ուժերի առջև Հարկաւոր է արծարծել այն՝ և ցոյց տալ—գէթ ընդհանուր գծերով—այն անհրաժեշտ ու հիմնական բարենորոգումները, որոնք պիտի տանեն աստիճանաբար ու անխուսափելիօրէն գէպի բուն ռամկավարական զօրասիստեմը, գէպի այն ընդհանուր, չամաժողովրդ տ կ ան բան ակը, որ արձանագրւած է ժամանակակից բոլոր ռամկավար կուսակցութիւնների, ի թիւս նրանց և Հ. Յ. Դ. աշշն ակցութեան, ծրագրի մէջ:

Պէտք է յար և միշտ ներշնչւել արևմտեան իդէալ-ներով, և որքան էլ մեր իրականութիւնը լինի մռայլ ու յետամնաց, որքան էլ մեր միտքը, ընդհանուր երկրի ստեղծագործող միտքը, կաշկանդւած լինի կրօնների, չին, քարացած դաւանանքների պօստուլատներով, որքան էլ գժւարին լինի հետևել քաղաքակիրթ ու ռամկավար Արևմուտքին, կերպարանափոխել մեր կեանքը համաձայն նրա պահանջներին ու հրամայականներին—պէտք է, այնուամենայնիւ, մշանչենապէս ունենալ մեր աշքի առջև այդ արևմտեան կեանքի կաղապարներն ու իդէալները, քալել նրա գծած ուղիով, տոգորւել նրա տուաշադէմ զաւակների մտահոգութիւններով և իդէալներով... Որովհետև դրա մէջ է փրկութիւնը,—մենք պէտք է առայժմ ընդուրին ակենք: Քաղաքակիրթութեան արևել երբեմն էր ճառագայթում միստիկական, առեղծ-

ւածային Արևելքից, բայց նա վաղուց մարել է այնատեղ, տեղի տալով Արևմուտքի հոյակապ, արգասաւոր Արևին, որ կոչւած է աւելի ուղիղ ճանապարհով, աւելի հաստատուն ու ապահով հանգրւաններով առաջնորդելու բազմաչարչար մարդկութիւնը գէպի բարօրութիւն, ազատութիւն ու հաւասարութիւն...

Պէտք է ձգտենք ընդորիխակել և իւրացնել մտքի ու իրականութեան աշխարհի մէջ Արևմուտքի մատակա, րարած պատրաստի բարիեները, որպէսզի դատապարտւած չը լինենք կը կն ել ու առաջադէմ ժողովուրդների արդէն գոցած շրջանները, նրանց դարաւոր էւօլիւցիայի տանջանքները:

Զօրը չը պէտք է բաժանւած լինի ազգային մարմնից, որպէս մի կաստ, զօրը և ազգ, զօրը և պետութիւն, զօրը ու հայրենիք՝ պէտք է կազմեն մի ներդաշնակ ամբողջութիւն—ահա թէ ինչ է ասում արևմտեան հետեղական ռամկավարութիւնը:

Ներդաշնակութիւնն ու մտերմութիւնը, մտքերի և զգացումների ազգակցութիւնը պէտք է տիրեն զօրքի այլեւայլ հատւածների մէջ—ահա նրա մի այլ նշանաբանը:

Ահա երկու նշանաբաններ, որոնք իսպառ բացակայում էին բանակալութեան օրերով և որոնք այժմ, սահմանադրական Տաճկաստանում պիտի սկսեն կամաց-կամաց արծարծւել ու աստիճան ան աբար իրականանալ:

Կատարւած յեղափոխութիւնը արդէն մասնակի նւիրագործումն է այդ երկու նշանաբաններին Արդարև:

1. Ընդհանուր հայրենիքի անձեռնմխելիութեան ու

բարգաւաճման անունով էր, որ Նիազիներն ու Ենվեր-ները ծածանեցրին ապստամբութեան դրօշը: Նրանք ցաւ ու կակիծով էին դիտում, թէ ինչպէս Հայրենա-դաւ բռնաւորը, լուգովիկոս XV-ի „après moi, le dé-*luge*“ նշանաբանն իւրացրած, պատառ-պատառ վաճա-ռում էր երկիրը եւրոպական ընչափաղց կապիտալիզմի ներկայացուցիչներին, նրանք տեսնում էին, թէ ինչպէս ֆիզիքական յօշոտման հետ կատարում էր և երկրի մատար ու բարոյական յօշոտումը...

2. Յուլիսեան Յեղափոխութիւնը և ազատագրական երկրորդ գրոհը ապրիլեան տագնապալի օրերում՝ պսակւեց աջողութեամբ, շնորհիւ այն մտերմութեան, մաքերի ու զգացումների այն գեղեցիկ ներդաշնակու-թեան, որ տիրում էր մակեդոնական բանակի այլեւայլ հատածների, սպաների, բարձրագոյն հրամանատարների և պարզ զինւոր-Հայրենակիցների միջև:

Երկու խոշոր հասարակական իրողութիւններ և երկու խոշոր քաղաքացիական առաքինութիւններ:

Պէտք է երկուսն էլ աստիճանաբար մշակել ու կա-տարելագործել Հասցնելու համար — հեռու, անյատ ապագայում — իրենց բնական ու տրամաբանական նպա-տակակէտին:

Զօրբը անհրաժեշտօրէն պիտի դառնայ — իր բոլոր հատածներով — ընդհանուր Հայրենիքի, բովանդակ օսմանցիութեան շահերի ու բաղձանքների հարա-զատ արտայայտիչ: Օսմանեան զօրը և օսմանցիութիւն պիտի կազմեն ոչ հակամարտ էութիւններ, այլ ներդաշնակ մի միութիւն: Եւ միենոյն ներդաշնակութիւնը պիտի շեշտւի այսուհետև բանակի այլազան հատածների միջև, ոչ միայն տարբեր աստիճանների, այլ և տար-բեր ազգայնական մասնիկների — թիւրք ու Հայ, բոլգար ու Հրէա, բիւրդ ու ալբան, յոյն ու

արար զինւորների միջև: Եւ բոլոր ազգերի համար հաւասարապէս մատչելի պիտի դառնան բոլոր աստիճանները:

Մեքենական, բոնադատեալ դիսցիպլինը պիտի սեղի տայ, աստիճանաբար այն մտերմական, ինքնայրդորդոր հա-մերաշխութեան ոգուն, որ ուժեղ է ընդհանութեամբ, այդ ոգին է հաղորդում բանակներին այն անսովոր ուժն ու կործվը, որով նրանք տագնապների վայրկեաններում դառնում են անպարտելի:

Որբա՛ն ահաւոր պատասխանատութիւն է ծանրա-նում ներկայումս Թիւրքիոյ զինւորական վերանորոգիչ-ների վրայ: Որբա՛ն սերտ կախումն ունի օսմանեան հայրենիքի ճակատագիրը դաստիարակութեան այն մե-թօդներից, որոնք պիտի կիրառեն այսուհետև զօրքի մէջ...

Ի՞նչ է պէտք մեզ: Ոչ, ի հարկէ, աշխարհակալող մի բանակ, նւաճողական ձգտումներով տոգորւած լէդէօն-ներ: Նւաճումների պէտք չունինք մենք: Այն էլ ար-դէն հսկայական մի գործ է, որ կարողանանք եղածը պահի ու բարօրացնել: Օսմանեան հայրենիքը պէտք ունի խաղաղութեան՝ ոչ միայն փոխանցումի այս ծանր ըրջաններում, ուր նա պիտի կենարօնացնէ իր համեստ ուժերն ու ճիգերը ներբին աչոելի աւերած-ների վերաշխութեան վրայ, այլ նաև առհասարակ պէտք է խոյս տայ նւաճողական պատերազմներից, որոնց գէմ են իրենց կենսական շահերով, իրենց բովանդակ էու-թեամբ՝ Թիւրքիոյ աշխատաւոր ժողովուրդները:

Օսմանեան վերակազմեալ ու ընդարձակւած բանակը պիտի ծառայի ոչ թէ տիրող արքայատոհմի ու ցեղի, ոչ թէ այս կամ այն դաստիարակի տիրապետութեան տենչանքներին, այլ բացառապէս ընդհանուր հայ-րենիքի պաշտոնութեան: Նա պէտք է,

Հետեապէս, մարզւի, դաստիարակւի այդ ուղղութեամբ:  
նա պէտք է բացառապէս ներշնչւած լինի այն ինքնա-  
պաշտպան և ինքնազո՞չ հայրենասիրութեամբ, որ բնու-  
րոշում ու ներբողում է լօրդ Սոլսբիւրի մեր ներա-  
ծական տողերի մէջ „Մի այնպիսի սպառազէն ազգ—  
ասում է հանգուցեալ լօրդը—որի ուժը լինի ոչ թէ  
իր քանակի կամ զինորական կազմակերպութեան մէջ  
այլ այն ոգու, այն անհաների ոգու մէջ, որոնք  
սիրում են իրենց երկիրը և պատրաստ են մեռնել  
նրա համար... Եւ նա օրինակ է բերում ինքնապաշտ-  
պան Շվեյցարիա յարի այն:

Աստիճանաբար ռամկավարացնել բանակը, աստիճա-  
նաբար մօտեցնել նրան ժողովրդին, մարդկայնացնել  
բարձր ու ստորին աստիճանների, ապա և տարրեր  
ազգայնական բաղադրիչների յարաբերութիւնները,  
կրծատել հետզհետէ զինորական ծառայութիւնը, նւա-  
զեցնել այդ բոլորի հետ և նրանցով խկ' միլի իտա-  
րի զմի ահսելի պատուհասը, որ անցեալ դարու  
70-ական թւականներից ի վեր կրծում, մաշում է օս-  
մաննեան պետութեան վտիս օրդանիզմը—ահա թէ որը  
պէտք է լինի վերածնուող Տաճկաստանի բոլոր ռամկա-  
վար տարրերի առաջնագոյն պարտաւորութիւններից մինը:

Միլի իտարի զմ և ոտամկավարաց ում (démocratisation)—երկու հակամարտ գործողութիւն-  
ներ են ամենուրեք, յամառ ու մշտնչենաւոր պատե-  
րազմի մէջ: Մինը վաղ թէ ուշ կլանելու է միւսին: Տեսնենք թէ ինչպէս են զարգանում երկու հակոտ-  
նեանները արևմուտքում:

\*

Միլիտարիզմի յարածուն չարիքը դառնում է օրէցօր  
ամենածանր վտանգներից մինը՝ բոլոր երկրներում: Եւ

զարմանալի չէ, որ նրա դէմ կազմակերպւած արշա-  
ւանքն ևս հետզհետէ աճում է իր խորութեամբ ու  
ընդարձակութեամբ, նա գրաւում է ոչ միայն Ճնշւած  
աշխատաւոր դասակարգերն ու նրանց պաշտպան սօ-  
ցիալիստական կուսակցութիւնները, այլ և բուրժուա-  
մտաւորականութեան որոշ խաւերը:

Ո՞րտեղից է գալիս այդ պատուհասը և ի՞նչ է այդ  
արշաւանքի նպատակը:

Նա գալիս է նոյն աղբիւրից, որից բղխում են նո-  
րագոյն կապիտալիզմի ու դասակարգային տիրապետու-  
թեան բոլոր չարիքները Բիսմարկեան Գերմանիան  
տւեց առաջին զարկ-նշանը — անցեալ դարու երկ-  
րորդ կիսում — և բոլոր պետութիւնները գահավէժ-  
պացան նրա ետևից: Փոքրիկ Պրուսիան վաղուց արդէն  
և առաջինը ոտք էր գրել նորագոյն միլիտարիզմի  
ձանապարհի վրայ, կազմակերպելով իր տեսօնեան  
զրահաւորած բանակը, մարզելով այն՝ կոյր, երկաթէ  
դիսցիպլինի մէջ, պատրաստելով այն՝ զուտ յարձակո-  
ղական, նւաճողական նպատակների համար: Այդ զուտ  
մօդեռն, ժամանակակից զօրասիստեմը, իր մնայուն, կուռ  
ու կարգապահ լէգէօններով, օժտւած դարի բոլոր  
նշանաւոր գիւտերով, կատարելագործումներով, ստեղծեց  
յետագյում — արեան, կրաքի ու երկաթի ձանապար-  
հով — գերմանական միացեալ կայսրութիւնը, բայց և  
միւս կողմից անբաւ չարիքների աղբիւր դարձաւ աշ-  
խարհի համար: 19-րդ դարի չարագործ հանճարը,  
Բիսմարկ, կարողացաւ անսովոր փայլ ու թռիչք հա-  
զորդել զինաւորութեան ու աշխարհակալութեան այդ նոր  
սիստեմին և վառեց բոլոր պետութիւնների ախորժակը:

Սկսւեց ամբողջ երկրագնդի վրայ զինաւորման մի  
համաձարակ տեսնդ, բոլորն էլ սկսեցին ընդօրինակել  
Պրուսիային, աճեցնել իրենց զինորական ուժը ծովի

ու ցամաքի վրայ, մասսամբ երկիւղից՝ նոր բարձրացող ու աշխարհակալող տիտանի հանդէպ, մասսամբ էլ մղւած նոյն „տարածման“ (*expansion*) ու աշխարհակալութեան ախորժակներով:

Գրանսիան 1871-ի սարսափելի թւականից ի վեր գերմարդկային ճիգեր թափեց՝ վերակազդուրելու, հաւասարւելու իր պատմական ոսոխին, նոյնիսկ նրան գերազանցելու... Անհուն ծախքեր, հսկայական զոհեր խլեց նոր Մողաքը երրորդ հանրապետութիւնից:

Միլիտարիզմի յորձանքը կլանեց նաև արեւելեան կիսա-  
կուլտուրական պետութիւնները. Ռուսաստան, Թիւրքիա,  
Լապօնիա և այլն ընթացան նոյն ճակատագրական ու-  
ղիով: Ռուսաստանը, որ ապրեց իր պատմական „պօդ-  
րօմը“ զրիմի պատերազմի մէջ ձգտեց այնուհետև  
վերակազմել իր զինաւորական խարխուր ու փառած օրգա-  
նիզմը և ուժ տվեց զինաւորումներին:

Թիւրքիոյ համար արդ փոխանցման շրջանը պէտք է  
ընդունել ոռւս-թիւրքական պատերազմի տագնապալի  
թւականները։ Պէտք է նկատել որ միլիտարիզմի հա-  
կումները դարերից ի վեր ուժեղ են եղել թիւրք տի-  
րապետող ցեղի մէջ։ Թիւրքիան ի սկզբանէ, գեռ  
արևելեան Հոօմի նւաճման ժամանակներից ի վեր, հան-  
դէս է եկել, իբրև էապէս զինորական մի պետութիւն,  
ուր բռնի, աշխարհակալող ուժը խեղեղել է բոլոր ուրիշ  
ժողովութիւնները, կաշկանդել է երկրի թէ նիւթա-  
կան և թէ մտաւոր-կուլտուրական ուժերի զարգա-  
ցումը։ Զինորական դասակարգն այդեղ ունեցել է  
գրեթէ առանձնացած, կաստային կերպարանը, գրաւել  
է միշտ բարձր, արտօնեալ դիրք պետական արժեքների  
սանդուիքի վրայ և վայելել է ընդհանուր յարգանք  
իր հարազատ միջավայրում։ Այդ էական հանգամանք-  
ներով պիտի բազատրել և Յուլիսեան Յեղափոխու-

թեան դիւրին ու շուտափոյթ աջողութիւնը՝ Նրա գլուխը կանգնած էր զինորական դասակարգը, որ ոչ միայն ամենաազգեցիկ, այլ և միանգամայն ամենակրթւած գործօնն էր օսմանեան, մահմեդական աշխարհում:

Տաճկաստանը, ինչպէս և բոլոր ուրիշ յետամնաց երկիրները, պատմական կատաստրօֆների ազդեցութեան տակ, շատապեց համակերպել անողոք անհրաժեշտութեան—վերակազմել իր բանակը եւրոպական կազմի արությունից, կրթել դաստիարակել ու աճեցնել. Այդտեղ ևս, ինչպէս Ռուսաստանում, քաղաքակրթութեան ու յեղափոխութեան գաղափարները ներս թափանցեցին... զօրանոցների միջոցով. Այդտեղ ևս, ինչպէս Ռուսաստանում (անցեալ գարու 20-ական թւականներին), յեղափոխական շարժման նախօրեակին, օֆիցերութիւնը, սպաները կազմում էին իրենց թւով ու որակով մի պատկառելի մտաւորականութիւն, ինտելիգենցիա... .

Դրանք նորագոյն միլիտարիզմի լուսաւոր կողմերն են,  
կան և ստերները... Դիւրին բան չէ պահպանել սնուցանել հարիւր հազարների բանակ... Լուծը աշուելի է  
և գուցէ ոչ մի ուրիշ պետութեան մէջ միլիտարիզմի  
պատուհասը այնքան կործանիչ ազգեցութիւններ չի  
ունեցել աշխատաւոր ժողովուրդների վրայ, ինչպէս  
թիւրքիայում, որը հռչակաւոր և իրազեկ գեներալ Գօն-  
դեր-Գոլցի վկայութեամբ իսկ՝ հանդիսանում է Եւրո-  
պայի ամենամիջիւթարակ ան պետու-  
թիւնը... Լուծը աշուելի է, որովհետեւ երկիրը —  
շնորհիւ բռնութեան դարաւոր թագաւորութեան —  
միանդամայն ուժասպառ է եղել, ցամաքել են արդիւ-  
նաբերութեան, „ազգային հարստութեան“ աղբիւները և  
միլիտարիզմի խոշոր ծախքերը ընկնում են առանց այն  
էլ թայախւած, խեղճ ու կրակ ազգաբնակութեան վրայ:

Դառնանք Արևմուտքին: Ամենուրեք, ուրեմն, մշտակայուն բանակներ (*armées permanentes*), ընկած իրենց արձիճային ծանրութեամբ աշխատաւոր ազգաբնակութեան ուսերի վրայ, որից խլում են ամեն օր և ամեն ժամ ամենակենսական հիւթերը: Նպատակը... Պահպանել մի երերուն խաղաղութիւն—Սպառազէն Խաղաղութիւնը—որ պատրաստ է ամեն վայրկեան խզել արիւնոտ խրախճաներով: Նպատակը... պահպանել մասաւնդ՝ „ներքին անդորրութիւնը“, թոյլ չտալ, որ հարստահարւած ու տանջող ժողովուրդը ըմբոստանայիր կեղերից դասակարգի գեմ, թոյլ չը տալ որ բոլորի յարածուն ալիքները ճնշածների բանակում բարձրանան ու հեղեղեն առանձնաշնորհեալ դասակարգերի ապարանքները: Նպատակը... ստրկացնել միանդամ ընդմիշտ աշխատաւոր ու մարտնչող ընդհանրութիւնը, յաւերժացնել կապիտալի մենաշնորհը և ձրիակեր դասակարգերի ոճանիւթ տիրապետութիւնը...

Տեսէք, թէ ինչպէս քաղաքացիական պայքարների, ժողովրդային ցոյցերի, բանւորական գործադուլների միջցին՝ սպառազինած վաշտերը գրոհ են տալիս աշխատաւոր շարքերի գեմ, ցրւում, հալածում և ի հարկին կոտորում: Նրանք միջամտում են կապիտալի ու աշխատանքի ընդհարումների մէջ՝ միշտ ի նպաստ կապիտալի, միշտ ի վնաս աշխատանքի. Նրանք յայտնում են ամեն պարագայում իշխող, դրամատէր դասակարգերի շահերի պաշտպան, կոյր, աւտօմատ ու հնազանդ գործիք:

Այդ ոգով էլ դաստիարակում են նրանք Մաճից, գործարանից և ընտանիքից խլելով ժողովրդի զաւակներին՝ երկար տարիներով մաշեցնում են զօրանոցների գարշ մթնոլորտում, որպէսզի պատրաստեն նրանցից... Ի՞նչ Արդեօք միայն „Հայրենիքի պաշտպաններ“: Բայց արդեօք հայրենիքի պաշտպանութեան զինւորներ պատ-

րաստելու համար՝ անհրաժեշտ է ամբողջ տարիներով անջատել այդ հարիւր հազարաւոր պատանիներին իրենց անօգնական աշխատաւոր ծնողներից, որոնց յաճախ միակ ապաւէնն են նրանք:

Երբէք: Այնք ցոյց կը տանք պերճախօս օրինակներով, որ հայրեն ապահով աշխատաւոր լուսական լուսականը—որ պատրաստ է ամեն վայրկեան խզել արիւնոտ խրախճաներով: Նպատակը... պահպանել մասաւնդ՝ „ներքին անդորրութիւնը“, թոյլ չտալ, որ հարստահարւած ու տանջող ժողովուրդը ըմբոստանայիր կեղերից դասակարգի գեմ, թոյլ չը տալ որ բոլորի յարածուն ալիքները ճնշածների բանակում բարձրանան ու հեղեղեն առանձնաշնորհեալ դասակարգերի ապարանքները: Նպատակը... ստրկացնել միանդամ ընդմիշտ աշխատաւոր ու մարտնչող ընդհանրութիւնը, յաւերժացնել կապիտալի մենաշնորհը և ձրիակեր դասակարգերի ոճանիւթ տիրապետութիւնը...

Ժեսէք, թէ ինչպէս քաղաքացիական պայքարների, ժողովրդային ցոյցերի, բանւորական գործադուլների միջցին՝ սպառազինած վաշտերը գրոհ էն տալիս աշխատաւոր շարքերի գեմ, ցրւում, հալածում և ի հարկին կոտորում: Նրանք միջամտում են կապիտալի ու աշխատանքի ընդհարումների մէջ՝ միշտ ի նպաստ կապիտալի, միշտ ի վնաս աշխատանքի. Նրանք յայտնում են ամեն պարագայում իշխող, դրամատէր դասակարգերի շահերին՝ երկար տարիներով մաշեցնում են զօրանոցների գարշ մթնոլորտում, որպէսզի կատարեն հլու, անմոռնչ հնազանդութեամբ գերմանական այժմեան կայսրի նշանաւոր խօսքն, ուղղած իր զինւորներին.

— „Երբ կը հնչի իմ կայսերական հրամանը, դուք պէտք է պատրաստ լինէք՝ հրացանի բռնելու անդամ ձեր հարազատ ծնողներին“...

Միլիտարիզմը, այդպիսով, չարիք է նոյնքան ներքին, որքան և արտաքին խաղաղութեան համար: Կա աւերում է ժողովուրդների անտեսութիւնը, հարւածում է ամենաշղթատ, աշխատաւոր խաւերին, որոնք առանց այն էլ տնքում են ամենուրեք բիւրօկրատական,

կապիտալիստական, վաշխառուական ու այլ ձեր հարստացարութեան տակ: Զօրքերի ու նաւատորմերի բիւջէն բոլոր խոշոր պետութիւնների մէջ կազմում է սովորաբար ընդհանուր բիւջէի ծանրութեան կենտրոնը: Անգլիայի, Գերմանիայի, ֆրանսիայի պէս պետութիւնները առայժմ դեռ կարողանում են դիմանալ կանգուն բանակների ու յարաձուն զինաւորութեան ծախքերին, քանի որ այդ երկիրները համեմատաբար հարուստ են, արդիւնաբերութիւննը ճոխ ու արգասաւոր և ազգային բարութեան. ընդհանուր մակերևոյթը համեմատաբար բարձր: Այնուամենայնիւ, նոյնիսկ այդ հարուստ պետութիւնների մէջ, աշխատաւոր ընդհանրութիւնը չարաչար տուժում է միլիտարիզմի ծայրայեզրութիւններից ապացոյց՝ հակամիլիտարական այն ահագին հոսանքը, որ ստեղծւել է այդ երկրներում և որի առջև ժողովուրդների հրամանատարները վաղ թէ ուշ ըստիպւած կը լինեն գլուխ խոնարհեցնել...

Որքա՞ն աւելի զդալի է միլիտարիզմի աւերածը տնտեսապէս ու կուլտուրապէս յետամնաց երկիրներում: Քանի՞ անգամ Խտալիայի, Սպանիայի ժողովուրդները արիւնալի ընդվյուններով փորձել են մեղմացնել այդ պատուհասը... Դեռ երէկ հերոսական կատալոնը, որպէս մէկ մարդ, ծառացել էր հայրենի դաւաձան կառավարութեան դէմ, որ ի հաշիւ իր ժողովրդի ստրկութեան ու տառապանքների՝ մղում էր ամօթալի պատերազմներ աֆրիկական Մարօգկոյում: Առայժմ, աւաշ՝ այդ աղնիւ ըմբոստացումները խեղդւում են ժողովրդական արեան մէջ—նոյն բթացած ու կամազուրկ զինւորների բազուկներով—բայց կը գայ ժամանակ, երբ աշխատաւոր զանգւածների մի ժեստը միայն բաւական կը լինի՝ ժողովրդասպան պատերազմները արգելելու, կանխելու...

Խտալիայից և Սպանիայից յետոյ—Ռուսաստանը և Թիւրքիան: Թէ որքան ծանր է միլիտարիզմի բեռլցարերի կայսրութեան մէջ, երեսում է պետական բիւջէից, նրա բաշխումից: 1906 թւի վիճակագրութեան համեմատ՝ զօրքի ու նաւատորմի վրայ ծախսում է մոտ 500 միլիոն բուրլի. մի գումար, որ կազմում է ընդհանուր բիւջէի քառորդը: Դեռ այդքանով, ի հարկէ, չեն սահմանափակում ոռուս ժողովրդի տնտեսական զոհաբերութիւնները՝ միլիտարական խորանին Հաշւեցէք, թէ որքան բերդուն, արգասաւոր աշխատանք են կորցնում այդ միլիոնաւոր ժիր ու առողջ երիտասարդները, որոնք ծաղիկ հասակի մէջ նվազում են իրենց չքաւոր ընտանիքներից...

Զինաւորութեան խելագերը ծախքերը „սխմում են“, բնականաբար այդ թշւառ երկրների զուտ կուլտուրական պէտքերը և նախ և առաջ՝ լուսաւորութեան գործը, դպրոցները, գրագիտութիւնը: Ոխմում են նրանք՝ թէ կառավարութիւնների և թէ նոյնիսկ աշխատաւոր աղագարնակութեան կողմից: Իրենց անծայր խեղճութեան մէջ ժողովրդային զանգւածները այդ երկրներում շատ քիչ հնարաւորութիւն ունին հոգալու իրենց զաւակների ուսման պէտքերը. և մենք տեսնում ենք, որ եւրոպական պետութիւնների շարքում, Թիւրքիայից ու Ռուսաստանից յետոյ, Խտալիան այն երկիրն է, ուր ագիտութիւնն ու անգրագիտութիւնը շեշտում են ամենաաշելի չափերով (\*):

(\*) Մի փոքրիլ աղիւսակ, Նիկոյարիայում ամեն մի 1000 բնակիչ ներից ընդամենը 6-ը անգամ է են, Կերմանիայում 1000-ից 21, Անգլիայում 24, Ֆրանսիայում 35, Աւստրիայում 327, Խտալիայում 1000-ից 529 անգրագէ են: Ձեռիք տակ չունիմ Ռուսաստանի բւերը, բայց յամենայն դէպու եւանք ուրեմն խուռ են, բան Խտալիայինը: Թիւրքիոյ մասին խոսին խոսկ աւելորդ է:

Աւերիչ՝ անտեսութեան համար, աւերիչ՝ կուլտուրայի ու մտառը առաջադիմութեան համար, մշտնջենական սպառնալիք՝ ներքին ու արտաքին խաղաղութեան համար:

Ներքին խաղաղութիւնը վտանգում է ոչ միայն զինւորական միջամտութիւններով՝ կապիտալի ու աշխատանքի պայքարի. ոչ միայն միլիտարիզմով իր կանգուն բանակներով և կաստային զօրասիստեմով՝ պատրաստ է միշտ միջամտելու աշխատաւորական, գործադուլային ու այլ տեսակ շարժումների մէջ, ոչ միայն նա պատրաստ է միշտ ճնշել ու ջարդել աշխատաւորին ի նպաստ կապիտալի ու գործատիրոջ, այլև նա միշտ ընդունակ է քաղաքական պատուհաններ բերել ժողովրդի գլխին, սադրել „պետական հարւածներ“ (coups d'état) ու վերիվայրումներ... յօդուտ, ի հարկէ, ոչ ժողովրդի, ոչ աշխատող ու տառապող ընդհանրութեան, այլ յօդուտ մի արտօնեալ փոքրամասնութեան, իր կաստի, դասակարգի...

Դա մի իրական սպառնալիք է, որ կապւած է միլիտարիզմի էութեան հետ: Գրանսիական պատմութեան վերջին տասնամեակը պերճախօս կերպով ցոյց տևեց այդ: Տեսանք գրել Փուլուսեան փոթորկալի դատի միջնորդին, թէ ինչպէս զինւորական բարձր առաջնորդները, գրեթէ ամբողջ սպայակոյտը (état-major), վարակւած մինչև ուղ ու ծուծ յետագիմական քաղաքարներով, թէ էր տաւլիս հակահանրապետական խաժամութին—կղերականներին, նացիօնալիստներին ու արքայականներին—կուռում էր պատութեան ու արդարութեան գէմ: Ենիփիօրէն դըրժում էր Գրանսիայի լաւագոյն աւանդութիւնները և պատրաստ էր ենթարկելու հանրապետութիւնը ամենահաւոր փորձութիւնների:

II

Կ Ն Ժ Ո Ւ Լ Ո Ւ Ժ Ո Ւ Խ Ն Ե Ր Ը

Յաշուական լուծում—Զինվակեցուրեան ծրագիրները եւ նրանց արդինքը—Յարական նախաձեռնութիւնը եւ Հասղի խորհրդադողութիւնը—Բուրժուա-խաղաղասիրական նուանքը—Բուն ուսմկավարական մոծումը—Աշխատաւորական Խնեւեացիօնակը եւ պատերազմը—Սօցիալիզմ եւ միլիտարիզմ—Երազործելին, ոչ ցնորականը—Ժողովուրդները չը պէտք է զինաքափւին: Համաժողովրական բանակը, իրեւ փրկութեան խարիսխ:


2արիք—ըստ ամենայնի...

Ինչպէս գարմանել... ինչպէս վերացնել, կամ գէթ մասամբ թեթևացնել ժողովուրդների մէջքի, սրտի և ուղեղի վրայ ծանրացած այդ սարսափելի բեռը: Ի՞նչ միջոցով կարելի է կանխել պատերազմները և սահմանափակել զինաւորումի այդ համաձարակ ու կատաղի տենդը: Սա ամենացաւոտ ու առաջնակարգ կնճիռներից մինն է, որ զբաղեցնում է քաղաքակիրթ մարդկութիւնը:

Երկու լուծում կայ:

Մէկը գալիս է „բարձր“, իշխող գասակարգերից: Միւսը գալիս է ժողովրդից և նրա պաշտպան ուամկավարական կուսակցութիւններից:

Առաջինը ձգտում է գլուխ բերել ընդհանուր զինը բայց ու թիւն (lesarmement) կամ զինաւորման սահմանափակումն՝ միջազգային համաձայնութեամբ, իրաւախութեամբ: Այդ ձգտումը ստացաւ մի տեսակ պաշտօնական նվիրագործումն 1899 թւին, երբ աշխարհի ամենահզօր ինքնակալներից մինը, սի-



կոլա II, հրատարակեց իր արտառոց մանիֆեստը համաշխարհային զինաթափութեան մասին։ Տեղի ունեցաւ Հատագի պատմական Խորհրդաժողովը։ Պետութիւնները, ի դէմս իրենց ամենաձեռնհաս ներկայացուցիչների, գումարւեցին Հօլլանդիայի մայրաքաղաքում և ամիսներ շարունակ խորհրդացին։ Արդիւնքը... Հէնց նոյն տարւայ մէջ պայթեց անգլօ-տրանսվալեան պատերազմը... Իսկ մի քանի տարի յետոյ՝ կեղծութեան գլուխ-գործոցը մերկացաւ իր բովանդակ այլանդակութիւններ սեփական միջավայրում, նոյն իրեն ն ա խ ա ձ ե ո ն ո զ ի մօտ... Առաջ եկաւ ոռուս-եապնական պատերազմը...

Աշխարհը տեսաւ, որ խաղաղասիրութեան ու միջազգային համերաշխութեան անունով խաղացում է մի անարժան կատակերգութիւն, որ այդ տեսակ բանակցութիւններով պատերազմները չեն վերանայ, զինաւորումները չեն նւազի, միջիտարիզմը չի թուլանայ, Ընդհակառակը՝ սբարեկամական<sup>ա</sup>, մեղմանոյշ զրոյցներից յետոյ իւրաքանչիւրը շարունակում է աճեցնել ծովի ու ցամաքի իր ուժերը։ Անգլօ-գերմանական հակամարտութիւնը մի նշանախեց անգամ չը պակասեց Հատագի երկու կոնդրէսներից յետոյ, ընդհակառակը՝ աւելի թափ առաւ, և այսօր երկու ախոյեանները կատաղօրէն մրցում են իրար հետ՝ զրահանաւերի շինութեան մէջ... որովհետեւ գերմանական բուրժուա ու Փէօդալ դասակարգերին հաճելի է՝ ծաւալել իրենց տիրապետութիւնը տիեզերական ջրերի վրայ, համաձայն կայզէրի ու ազգակոչին։ „Unsere Zukunft auf dem Wasser!“ (Մեր ապագան ջրերի վրայ է) և որովհետեւ միւս կողմից էլ Անգլիային ցանկալի է անխախտ պահել, „Ճովերի միահեծան թագուհու“ իր պատմական, տիեզերական հմայքը։

Ուրիշ հակամարտութիւնները ես չը թուլացան Հատագից յետոյ, այլ միայն շեշտեցին. բոնակալների

և պրօֆէսիոնալ գիւտանագէտների բերնով հռչակւած ին աղաղութիւնը աւազի վրայ կառուցւած մի շէնք էր, խարխուլ ու երերուն. նա ամեն վայրկեան պատրաստ է վկել։

Կայ և բուրժուառամկավարական խաղաղասէրների ընդհանրապէս համակրելի տարրը, որ բոլոր երկրներում եռանդով պրօպագանդ է մղում խաղաղութեան ու ազգերի համերաշխութեան մասին, ունի իր տարեկան համագումարները, իր մամուլը, ունի և կենտրոնական միջազգային իր բիւրօն Շվեյցարիայի Բելն բազառում։ Ինքնին օգտակար ու համակրելի մի հաստատութիւն, որ քարոզում է, երբեմն նոյնիսկ աջողեցնում, միջպետական մանր կնճիւների խաղաղ հարթումը իրաւարար ատեանների միջոցով, սակայն ազգու և վճռական գործոնի դեր միլիտարիզմի ցաւոտ հարցերում՝ չի կարող խաղալ նուե այդ անպաշտօն, բուրժուառամկավար խաղաղասէրների ինտերնացիոնալը։

Երկրորդ լուծումը—բուն ու ամկարակ աննէ։ Նրա միլիօնաւոր կողմանակիցների մէջ կան, ի հարկէ, բուրժուազիայի ձախակողմեան, գեմօկրատ տարրերից, բայց նրա հզօր ու հետեղական փաստաբանն են բոլոր երկրներում՝ սօցիալիստական կուսակցութիւնները, Միջազգային Աշխատաւորական Միութիւնը—Ին տերն ացիօն ալը։ Վերջինը այնքան արդէն ուժեղ է իր թուով ու ազգեցութեամբ, որ այժմից իսկ կարողանում է զդացնել իր թափը միջազգային բարդութիւնների կշռի վրայ, կարողանում է երբեմն—իր կորովի սկառնալիքներով, պարլամենտական միջամտութիւններով ու հաւաքարակական զանգւածային ցոյցերով—արգելը լինել պատերազմներին։ Գրանսիական սօցիալիզմն էր, որ վերջին երկու տարւայ ընթացքում, Մարոկկօյի ճգնաժամի միջոցին, զսպեց հայրենի կառավարութեան

և ուազմատենչ բուրժուազիայի ախորժակները, յուղեց շարունակ հասարակական կարծիքը և կանխեց շատ արիւնալի արկածներ: Եւ երբ անցեալ տարւայ ընթացքում, անգլօ-գերման յարաբերութիւնները հասել էին հակամարտութեան ու լարման գագաթնակէտին, երբ մթնուլորալ ելեքտրականացել էր և տոգորւել պատերազմի յամառ շշուկներով, գարձեալ սօցիալիստ կուսակցութիւններն էին, որ հնչեցրին ամենաազգու ՝հաւարը՝ երկու երկրներում գերմանական սօցիալիստները գնացին Լօնդոն, անգլիական սօցիալիստները իրենց հերթին գնացին Բերլին և երկու մայրաքաղաքներում կատարւած թափօրների, սօցիալիստական, անգլօ-գերման եղբայրակցութեան ցոյցերի մէջ՝ կառավարութիւնները նշյարեցին աշխատաւոր զանգւածների հրահանգիչ սպառնալիքը...

Ի՞նչ ահաւոր նախազգուշացումն էր նոյն բուրժուատ և աւտական գասակարգերի ու կառավարութիւնների համար՝ Սպանիայի, Կատալոնի վերջին ցնցող անակնկալը... Այդ հազարաւոր ապստամբները, որոնք բողոքելով շղթայալերծւած պատերազմի դէմ, պարզում էին ընդհանուր գործադուլի ու սօցիալիստական ազատագրութեան կարմիր գրօշը, գնում էին գնդակների տարափի տակ քանդելու բռնակալութեան, կղերի ու բուրժուազիայի պատւարները—դա ՝Պարիզեան կումմունայից՝ յետոյ ամենածանր, ամենաարհաւրալի դասն է, որ չի կարող մտածել շը տալ աշխարհի ռազմասէր հրամանատարներին...

Քոլոր ՝Խաղաղասէր՝ հոսանքներից սօցիալիզմը ամենաիրականն ու զօրաւորն է, բոլոր գիմադրական հատւածների շարքում՝ սօցիալիստական կուսակցութիւնը ամենաազգուն է միջազգային քաղաքականութեան ծանրակշիռ խնդիրների մէջ, որովհետև նա ունի իր ետևում անձնազոհ մարտնչողների բազմամիլիոն զանգւածներ,

որոնք կարող են պատերազմի միջոցին մի օր վերջապէս, ծառանալ յաղթականօրէն ժողովրդի բոլոր այլազան ոսոիների դէմ և խաւարեցնել միանգամ ընդմիշտ բռնակալութեան ու կապիտալիզմի արեգակը... Սօցիալիզմը գրեթէ միակ ուժն է, որ պարլամենտներում ևս, ուժգին ու սխոտեմատիկ քննադատութիւններով, սանձ է դուռմ միլիտարիզմի ու անվերջ զինաւորութեան ախորժակներին:

Ի՞նչ է բարողում սօցիալիզմը միլիտարիզմի դէմ:

Նա գաւանում է այն համոզումը, որ պատերազմը ժամանակակից բաղաքակրթութեան մէջ բղխում է կապիտալիզմի բէժմից, որ միջազգային բարդութիւններին սովորաբար խթան են լինում իշխող գրամատէր գասակարգերը, որոնք ձգտում են միշտ նորանոր հողեր գրաւել երկրագնդի խուլ ու խոպան անկիւններում, ձգտում են ըստ կարելոյն ընդլայնել իրենց ՝գաղութային՝ տիրապետութիւնը, որպէսզի հնար ունենան արտահանելու, սպառելու իրենց յարաճուն արդիւնաբերութեան լեռնացող արդիւնքները:

Պատերազմը կապիտալիզմի անբաժան ստւերն է և կը վերանայ վերջնականապէս միայն այն ժամանակ, երբ կը վիլատակւի կապիտալիզմի բովանդակ շէնքը, երբ մասնաւոր սեփականութեան ու գասակարգերի անհետացման հետ՝ կ'անհետանան ժամանակակից հասարակութեան բոլոր աղալակող անիրաւութիւնները:

Այդ համոզումը, սակայն, չի թելագրում իր գաւանողներին՝ սպասել ձեռնածալ, կրաւորական գիրքի մէջ, մինչև կապիտալիզմի փլատակումը: Կրանք կուռմ են պատերազմի ու միլիտարիզմի դէմ ա յ ժ մ ի ց ի ս կ: Կրանք ձգտում են—արդէն ներկայ բուրժուազական կարգերի մէջ—մայնելու, իրագործելու այնպիսի հիմնական բարենորոգումներ, որոնք պէտք է առաջնորդգեն,

որպէս անհրաժեշտ հանգըւաններ, դէպի ճշմարիտ միջազգային խաղաղութիւն ու համերաշխութիւն:

Սօցիալիստները այժմից արդէն չեն պահանջում ազգերի զին աթ ա փութիւն: Նրանք ուտօպիստ երազողներ չեն, անիրադորժելի ցնորդների ետևից ընկած. նրանք բէալիստ, իրապաշտ մարդիկ են, որ վնասը են իր ա գործելի ին: Նրանք գիտեն յարմարւել ժամանակի ու տարածութեան պահանջներին, գիտեն որոշ չափով համակերպել իրականութեան անողոք անհրաժեշտութիւններին:

Իրականութիւնը, աւազ, գեռ հեռու է այն ոսկէ գարից, երբ գայլն ու գառը մէկտեղ կ'արածեն, երբ մարդ-գայլերը կարող են ապրել իրենց նմանների հետ խաղաղ գրացիական կենցաղի մէջ, առանց իրարու հետապնդելու և բզիտելու: Իրականութիւնը — անդամ քաղաքիրթ, ամենաառաջադէմ իրականութիւնը — տակաւին լեցուն է յոոի, մարդասպան, պատերազմատենչ բնազդներով, որոնց հանդէպ խաղաղասէր ժողովուրդները պիտի մնան միշտ՝ զգաստ, աշալուրջ հսկողի գիրքում, եթէ չեն ուզում անդունդ գնալ և անդունդ գլորել բաղաբարթութեան բովանդակ շէնքը: Ո՛չ ազգերը չը պէտք է զինաթափւին: Գարշելով հանդերձ ժողովրդասպան պատերազմներից, ատելով հանդերձ վառօդի հոտը, ժամանակակից ուամկավարութիւնը, սօցիալիզմը պատրաստ են, այնուամենայնիւ, սպառազինւած կուի գաշտ ելնել, հէնց որ ծայր կը տայ հօրիզոններից աշխարհակալող ու բռնաւոր պատերազմի ուրւականը, հէնց որ խաղաղ, կուլտուրական հայրենիքի յարձակման վտանգի:

Ժողովուրդները չը պէտք է զին աթ ա փւին: Աւ ի՞նչ է անզէն ժողովուրդը ժամանակակից աշխարհում: Մի ողբալի փալաս, մի անձար ու

զզւելի խամաճիկ, որին բռնաւորները — զրսից կամ ներսից — կարող են միշտ թելադրել իրենց անսանձ բամահաճոյքը:

Ա՛յ, երանի թէ բոլոր ազգերը, բոլոր մանր կուլտուրական համայնքները վաղուց արդէն, իրենց գոյութեան խանձարուրից՝ իւրացնէին ճակատագրի այդ անողոք հրամայականը, երանի՝ թէ ըմբռնէին նրանք իսկզբանէ աշխարհի հզօր, արիւնապարտ այն օրէնքը, որի համեմատ Ու ժը, բիրտ, կոպիտ ուժը քայլում է միշտ իրաւունքի առաջնաղացութիւնն ու յաղթանակը և հազորդում է ժողովուրդներին այն անհրաժեշտ փայլն ու հմայրը, առանց որոնց՝ նրանք տեղ չունին, տարաբախտաբար, աշխարհի ճոխ ու լիառատ սեղանի շուրջը...

\*

Անզէն ժողովուրդը ազատ ժողովուրդ չէ: Կա չի կարող վայելել տեսողաբար իր նւաճած ազատութիւնները՝ ոչ մի բէժիմի տակ — ոչ սահմանադրական միապետութեան, ոչ իսկ ուամկավար հանրապետութեան մէջ: Բուրժուատ, աւատական, զինւորական, կղերական դասակարգերի ծոցում միշտ անպակաս են դաւադիր տարրեր, պատրաստ աջող վայրկեաններում խեղդելու ժողովրդական իրաւունքները, թաղելու ուամկավարութիւնը... Մի բուռն վարձկան զինւորների ուժը — այս կամ այն արկածախնդիր բռնաւորի ձեռքում — բաւական է երբեմն՝ այս կամ այն ժողովուրդը ոտնատակ անելու, ստրկացնելու:

Իսկ միւս կողմից, ժամանակակից մեծ պետութիւնների միլիոնաւոր կանգուն բանակները — ինչպէս արդէն տեսանք — նոյնպէս ոչ մի երաշխիք չեն ներկայացնում

Ժողովուրդների տևական ազատութեան, կուլտուրայի ու առաջադիմութեան համար. ընդհակառակը՝ ենթարկւած լինելով իշխող դասակարգերի, երբեմն նոյնիսկ սահմանադրական միապետի, հրամանատարութեան, այդ բանակները սոսկ գործիք են հարստահարութեան ու յափշտակման, նրանք պատրաստ են իրենց տէրերի հրամանի վրայ, հլու, անմոռւնչ հնազանդութեամբ արշաւել ուրիշ ժողովուրդների դէմ, շղթայագերծել պատերազմների սարսափները, մղել երկիրը դէպի կործանում, նետւել նոյնիսկ հարազատ անզէն ժողովրդի վրայ՝ նրան „զսպելու“, „խաղացնելու“ նպատակով... „Կանգուն բանակների“ սիստեմի մէջ ազգաբնակութեան ահագին մեծամասնութիւնը մնում է դարձեալ անզէն, անատամ, մերկապարանոց և ազատագրական տագնապների մէջ—անուժ ու անօգնական...

Համաժողովրդական բանակները Զինւած ու մարզւած ժողովուրդն է միայն, որ կարող է ընդմիշտ ապահովել իր ազատութիւնը, թումբ կանգնելով բռնակալական և ամեն տեսակ յետադիմական դաւերի հանդէպ երբ ամրազջ ժողովուրդը, նրա բոլոր առնական ուժերը գիտեն զէնքի գործածութեան եղանակը, գիտեն կըռւելու լաւագոյն արւեստը,—ոչ մի միապետ կամ կամայապետ, ոչ մի զինւորական կամ աւատական ուժ, ոչ մի բռնաւոր, հակաժողովրդական կաստ ու դասակարգ չի կարող յարատեն իր տիրապետութիւնը, անդամ միլիօնաւոր վարձկան ու այլ զինւորների աջակցութեամբ:

### III ԾՎԵՅՅԱՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Զօրի ըլեյցարական հանրապետութեան մէջ.—Զինւոր-խաղաքացի. — Խաղական ծիրել—մի աւանդ նախնիներից.—Լորդ Սօլսբիրին՝ ըլեյցարացիների ու նայերի մասին. — Զինւորական ծառայութիւնը՝ մի մասը ընդհանուր կրական սխմանի. — Մարմանամարզական եւ նրացանաձիգ ընկերութիւններ. — Ժողովրդական ուսմէց ամբողջ բանակի մէջ.— Հայրենիքի պատշաճութիր. — Ըլեյցարական սիպար-օրինակ՝ ամբողջ տիստրի, նաև մեզ նամար.

Այդ պարզ, զգաստ տրամաբանութեամբ է, որ ազատ Հելվեցիայի փոքրիկ ժիմել է իր սիրուն հայրենիքում „ազգային բանակի“ (*milice nationale*) ուժեղ ու համակրելի սիստեմը:

Թերութիւններ ունի, ի հարկէ, և այդ սիստեմը, բայց Շվեյցարիան, յամենայն դէպս, ամենից աւելի է մօտիկ կանգնած այն իդէալական վիճակին, որ անւանում ենք համաժողովրդական զինւած ու ուրութիւն կամ թէ սպառագէն ու ամկա վարութիւն:

Նկարագրենք լնդհանուր գծերով շվեյցարական այդ սիստեմը:

Նրա ամենաէական գիծն այն է՝ որ իւրաքանչիւր քաղաքացի զինւոր է, առանց դադրելու քաղաքացի լինելուց: Բոլոր շվեյցարացիք զինւոր են և սակայն ոչ մէկը նրանցից չի լիւում իր քաղաքացիական անհրաժեշտ պարտաւորութիւններից:

Չը կայ զինւորական կաստ, դասակարգ. չը կան արչ ես ով զինւորներ: Չը կայ նպատակ՝ կառուցանելու զինւորական բարդ, հոյակապ մարմիններ: Նպատակն է՝ կրթել դաստիարակել և կազմակերպել բոլոր առողջ շվեյցարական քաղաքացիներին այնպէս, որ վտանգի

ժամկն նրանք կարողանան հանդէս բերել կուռ, ներգաշնակ ու արագաշարժ մի բանակ — ոչ թէ նւազողական արշաւանքներ նիւթելու, այլ միայն իրենց թանշագին հայրենիքը պաշտպանելու...

Զը կայ հելվետեան սիստեմի մէջ միլիտարիզմի ջախջախիչ բեռը, չը կայ երկարատե, մաշող հոգեհանձաւայութիւնը, չը կայ այն անդունդը, որ բաժանում է մեծ պետութիւնների մէջ զինւորական բարձրագոյն աստիճանաւորներին իրենց ստորագրեալ զինւորներից, չը կան այն անվերջ ու ատաղալի կազմային մարզանքները, որոնք բթացնում ու ստրկացնում են զինւորին, դարձնում նրան անխօս գործիք, հլու աւտոմատ և դաժան, աւերիչ մի ուժ... Ըփէյցարիան ազատ է միլիտարիզմի ամենախոշոր չարիքներից:

Ասհմանազրութեան 18-րդ յօդւածի թելադրութեամբ՝ իւրաբանչիւր ողջանդամ (*valide*) բաղաքացի պարտաւոր է բան տարեկան հասակից սկսած, կատարել զինւորական ծառայութիւն։ Այդ պարտաւորութիւնը բացարձակ է, նա չի ընդունում որևէ զիջում, արտօնութիւն յօդուտ այս կամ այն անհատի կամ ընտանիքի։ Միևնոյն գերդաստանի բոլոր եղբայրները պարտաւոր են ծառայութեան գնուլ։ Օրէնքին ենթարկում են անդամ նրանք, որոնք ընտանիքի պահպանող, կերակրողն են:

Ազատում են զինւորական ծառայութիւնից — իրենց պաշտօնավարութեան ընթացք ու մասեւ հետեւ կատէգօրիաները (բայց անդամ գրանք պէտք է անհրաժեշտաբար անցած լինին նորակոչների դպրոցը — *école de recrues* — և մտցրւած լինին որևէ զօրամարմին) մէջ։

1. Դաշնակցական Խորհրդի անդամները (թւով 7, որ կազմում են ըլեյցարական հանրապե-

տութեան բարձրագոյն կառավարութիւնը), „Դաշնակցութեան“ գիւանագպիրը, դաշնակցութեան Ատեանի բարտուղարները։

2. Փոստ-հեռագրային, ուազմամթերային վարչութեան և զինւորական արհեստանոցների պաշտօնեաներն ու ծառայողները. ապա և կանտոնային այլ և այլ զինւորական պաշտօնեաներ։
3. Հանրային հիւանդանոցների համար անհրաժեշտ տեսուչներն ու պաշտօնեաները, կանտոնային բանտերի, ոստիկանութիւնների, ապա նաև մաքսատների ծառայողները և սահմանապահ պաշտօնեաները։
4. Հոգեւոր կոչում ունեցող անձինք, եթէ նրանք չեն ծառայում, իբրև զինւորակ բահանաներ։
5. Ըստ պատահման, հանրային գպրոցների ուսուցիչները։
6. Երկաթուղիների և նաւային հաղորդակցութեան գծերի վրայ ծառայող այն բոլոր անձինք, որոնց կոչումն է՝ պահպանել շտկել ու շահագործել հաղորդակցութեան այդ միջոցները։

Բոլոր նրանք, որոնք ըլեյցարական հայրենիքից դուրս գտնւելով կամ թէ նրա հողի վրայ այս կամ այն պատճառով չեն ենթարկում զինւորական ծառայութեան, պարտաւոր են վճարել տարեկան որոշ տուրբոտուրբից ազատում են այն չքաւորները, որոնք ֆիզիկական կամ հոգեհետական որևէ հիւանդանութեան պատճառով չեն կարող կերակրել իրենց ընտանիքները։

Զինւորական ուժերը Ըփէյցարիայում բաժանվում են երեք կարգի։

1. Իսկական կամ գործօն զօրք (*Elite*), կազմւած 20-ից մինչև 32 տարիք ունեցող բոլոր բաղաքացիներից։

2. Լանգվեեր (*Landwehr*) կամ առաջին պաշտօնական բանակ. այդտեղ մտնում են 32-ից մինչև 40 տարի ունեցող բաղաքացիները:
3. Լանդշտուրմ (*Landsturm*) — երկրորդ պաշտօնական բանակ. այդտեղ մտնում են 41-ից մինչև 48 տարեկանները \*):

Լանդշտուրմի մէջ մտնում են նաև այն զինւորականները, որոնք ժամանակի ընթացքում դառնում են անընդունակ առաջին երկու զօրակարգերի ծառայութեան համար: Մասնում են, վերջապէս, նոյն լանդշտուրմի մէջ կամաւորները 20 տարեկանից պաշտօն և 48-ից աւելի, որոնք ունին բաւականաշափ փիզիկական և զինւորական ընդունակութիւններ:

Ըստէյցարացին համարւում է այդպիսով զինւորական ծառայութեան մէջ իր 20 տարեկան հասակից մինչև 48-ը: Զօրահաւաքը կատարւում է իւրաքանչիւր տարւոյ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներում: Կորակոչները, ըստ իրենց ընդունակութիւնների, դասաւորւում են այս կամ այն դպրոցում, ուր մնում են 45-ից մինչև 80 օր, նայեած զինւորական արհեստի ձիւղին: Պահանջւում է՝

45	օրւայ վարժութիւն	հետեւակազօրքի համար:
80	"	հեծելազօրքի "
55	"	թնդանօթաձիգի "
50	"	զինւոր. ճարտարագէտների (Génie)
46	"	սանիտարների (առողջապահութիկ) զօրքի համար:

2ը կայ, ուրեմն, մշտնջենաւոր, պրօֆէսիօնալ, կանգուն բանակ, զատւած ընդհանուր հասարակական

\*) Աս նորագոյն կանոնադրութեան. Տես „Organisation militaire de la Confédération Suisse“, 1907.

կեանքից. կայ համազգային, համաժողովրդական միջորք, որ տարածւում է անխտիր բոլոր բաղաքացիների վրայ և որի հատւած-միաւորները ունին միայն ժամանակաւոր մի գոյութիւն: Քաղաքացիները այս կամ այն ձիւղի մէջ որոշ ժամանակ ծառայելուց, որոշ անշրաժեցած մարզանքները կատարելուց յետոյ՝ վերադառնում է իր օձախը, նւիրտում է կրկին իր քաղաքացիական աշխատանքին, պարտաւորելով յետագայում վերստին երեան գալ պարտերաբար, բարձր իշխանութեան հրաւերով, այդ մարզանքների կարճատե կրկնողութեան համար (*les répétitions*):

Բարձր գործադիր իշխանութիւնը՝ զինւորական պաշտում ու առաջ է (département militaire),— Համաշվեյցարական սպայակոյտը, որի անդամները նշանակւում են դաշնակցական բարձրագոյն կառավարութիւնից, և որի գլխաւորն ընտրում է Յ տարի ժամանակով: Պատերազմի միջոցին այդ վերջինը ստանձնում է գեներալի, ընդհանուր հրամանատարի պաշտօն: Կրթւած, մարզւած բարձր սպաների այդ մարմինը և հսկում է զինւորական ընդհանուր կարգապահութեան վրայ, որը առհասարակ օրինակելի է Ըստէյցարիայում. Նա կազմակերպում ու գործադրում է զինւորական արդարադատութիւնը, սահմանում է պատիժներ այլևայլ զանցառուների համար: Զանցառութեան, դասալքութեան օրինակներ առհասարակ շատ քիչ են լինում այդ երկրի մէջ, իւրաքանչիւր բաղաքացի տոգորւած լինելով այն գիտակցութեամբ՝ որ զինւորի պաշտօննայդտեղ ամենասուրբն է բոլոր պաշտօններից, որ նրա կրած գրօշը խորհրդանշանն է շվեյցարական հայրենիքի — երկրագնդի ամենաբարեփառ հայրենիքի — պաշտօնութեան ու անբռնաբարելիութեան..

Որքա՞ն համեմատաբար կարծատեւ է զինւորադիան կրթութիւնը... Բայց և որքա՞ն հրահանգիչ է նա, արդատաւոր՝ պատերազմական, բարոյական, բազաբացիական տեսակէտից: Ուր են երկար տարիների միօրինակ, սպանիչ մարզանքները, որոնք բնորոշում են մեծ պետութիւնների միլիոնարական սիստեմները...

Տարիներն այստեղ փոխարինւած են ամիսներով ու շաբաթներով, բայց այդ ամիսների ու շաբաթների մէջ իւր աք անչիւր ժամը օգտագործւած է ամերողապէս ու ամենայն ինսամբով, ժամանակի և աշխատանքի ոչ մի հիւլէ չի կորչում այդ կարծատեւ մարզանքների մէջ: Զինւորական արւեստն ուսումնասիրւում է հանդամանօրէն, իր բոլոր մանրամասներով, առաջին րէկրուտական դպրոցից յետոյ պարբերաբար նորէն զէնքի կոչւելով, երիտասարդ զինւորը այդ կարծատեւ կրկնութիւնների ընթացքում թարմացնում է իր յիշուզութեան մէջ անցեալ փորձերը, կատարելագործում է իր զինւորական ծանօթութիւնները, աւելի տոգորւում իր պաշտօնի գիտակցութեամբ, աւելի վառւում հայրենասիրական իր կոչումով... Նա նոյնքան ճարպիկ, նոյնքան մարզւած, նոյնքան հնարագէտ է, որքան և մեծ պետութիւնների զինւորները, որոնց „մշակում են“ ամրող տարիներ զօրանոցների տանջարաններում...

Զինւորական կրթութիւնը Շվեյցարիայում կազմում է ընդհանուր կրթական սիստեմի հետ մի գեղեցիկ համագրութիւն, մի սենթեզ որ, կարելի է ասել, յատուկ է միայն այդ երկրին: Զինւորի արհեստը, մարզանքները, զինավարժութիւնը սկսում են ոչ թէ 20 տարեկանից, այլ շատ առաջ՝ պատանիների, մասնուկների մօտ:

Պատմական խոր պատճառներ ունի այդ հրապուրիչ երեսիթը: Շվեյցարիան մէկն է այն երկրներից՝ „փոք-

րիկ ու մեծ“, կուլտուրական երկրներից—որոնք դարերով կրել են իրենց կաշւի վրայ բռնապետական լախտի հարւածները և որոնք—մշտած գոյութեան կուի անագորոյն պահանջներից—վաղուց իւրացրել են ըմբռութեանքի բոլոր առնական պատւիրանները, զորգացրել են իրենց ծոցում դիմադրութեան, ինքնապաշտպանութեան հզօր բնազդը, զարգացրել են այն բոլոր յատկութիւնները, որոնցով պէտք է զինսի ճակատագրաբար գայլերով ու բորենիներով շրջապատւած ամեն մի համայնք, եթէ չի ուզում այլասեռուել ու անդունդ գնալ...

Երկար դարերի ընթացքում շվեյցարացիք վաստակել են ամբողջ աշխարհում „ռազմիկ-ժողովրդի“ նախանձելի հռչակը որ երբեմն, տարբախտաբար, պատճառ է եղել այդ հերոսական համայնքի նւաստացման, նրա զաւակների „վարձկան“, անարգիչ ծառայութիւնների... օտար երկրներում, յօգուտ այս կամ այն բռնաւորի ու արբայական գինաստիայի... Շվեյցարացիներին, իբրև վարժ, գերազանց հրացանաձիգների, վարձում էին պատերազմների միջոցին և վարձկան-զինւորների (mercenaires) այդ ուժեղ աջակցութիւնը գնում էր սովորաբար ի նպաստ բիրտ, միապետական, նւաճողական յաղթանակների...

Զինւորական պատճականօրէն, ժառանգականօրէն անցել է շվեյցարական սերունդներին և այսօր, կարելի է ասել, Վիլհէլմ Տէլի փոքրիկ, հպարտ հայրենիքը մի կատարեալ մարզաբան է, ուր անգամ մանուկները, ապագայ զինւոր-բազաբացիք, իւրացնում են արգէն ռազմական արւեստի անհրաժեշտ հիմունքները, պարապում են մարմնամարզութեամբ, վարժուում են հրացանաձգութեան, դարձնում

Են այն մի տեսակ գերադոյն զւարձալիք \*): Գիշեղական ու բաղաբային գպրոցները արդէն մի-մի այդպիսի մարզաշաներ են, ուր աւանդում են զինորական մարմամարզութեան առաջին կանոնները, և երբ գեռ գրեթէ պատահի՝ շվեյցարացի նորակոչը ստանում է իր նզինորական գրկոյկը”, նա անհամեմատ աւելի է պատրաստած իրագործելու ռազմակին կարգապահութեան պահանջները, քան իր հասակակից նորակոչները միւս երկրներում:

\* Զենք կարող չը լիւել այսեղ մի ուշագրաւ խօսակցութիւն, որ տեղի է ունեցել 1896 թին Շվեյցարական Հանրապետութեան նախագահի եւ ամպ. լող Սոլրիւրի միջնու—մեր, հայլական խնդրի առքի: 1896-ին, մեծ ջարդերից լեռոյ, ինչպէս յայտնի է, Շվեյցարիան միահերկու էր, որ ծայրէ ծայր բռնուած բռնուի ու ցաման միտինզներով, վնաց պատասխան հանգամանի տալ այդ բռնուին եւ համազային մի պատասխանութիւն ուղղելով եւրեն, դասնակցական բարձրագոյն կառավարութեան մօս, թէլարքէց վերջինին՝ նաղորդի իր ցասումը համինան զազանութիւնների համար պատասխանատու պետութիւնների:

Կառավարութիւնը լինելով այդ եւկում ժողովրդի սպասաւորը, առանց Շվեյցարիան համակերպեց ընդունած որոշումին եւ նախագանը ցնաց անձամբ կատարելու մեծ պետութիւնների ներկայացուցիչների մօսուիր ծանր առամելութիւնը: Եւ երբ Լօնդոնում „փորհի-մեծ“ Հելվետիայի պատօսիական ներկայացուցիչը լող Սոլրիւրի (այս ամեն „պրեմիեր“) սիրալիր նիւրենկալութեան մէջ, նաև սեղանի ընուցը պատմում է նայ ժողովրդի մատիրոսութիւնը, նայցնով իր եւկրի անոնից կորովի միջամտութիւն—ազնիւ լողը, որ իր ընուցումանութիւնը մենալու համար նրապարակ էր նետէ ծանօթ քազար որդիանական նաւառորմի եւ տաւոսնան զազարների՝ մատին—խորիսան կերպով ու կիսակուսակ մամնչում է Շվեյցարիայի նախագանին.

— „Ո՞ն, պարու նախազան, թէ որ հայերն ել ձեր հաջարի հայրենակիցների պէս հրացան բռնել զիտենային... այդ ջարդերը չին առաջանայւ”...

Ուրա՞ն բռնալից հօմարութիւն այս պատմական յայտարարութեան մէջ...

Որքա՞ն բազմաթիւ են մարմնամարզական կամաւոր ընկերակցութիւնները Շվեյցարիայի բոլոր կանուններում: Նրանք յաճախ վայելում են դաշնակցական կառավարութեան հովանաւորութիւնը, գրամական նպաստը: Զինորական կանոնագրի 104-րդ յօդւածն ասում է՝

„Դաշնակցութիւնը (La Confédération) նպաստաւորում է ընկերակցութիւնները և առհասարակ այն բոլոր ջանքերը, որոնց նպատակն է հոգալ պատասխաների նախապարաստական զինորական կրթութիւնը՝ զին ծառայութեան պահանջած հասակց առաջի Դաշնակցութիւնը հսկում է, որպէսզի հրաձգութեան գումարումը առաջին տեղը բռնէ և նա ձրիապէս մատակարարում է զէնքեր, ռազմամթերք ու հանդերձանք“:

Հռչակաւոր են այսպէս կոչւած դաշնակցական հրաձգութեան գումարումները (tirs fédéraux), որ աեղի են ունենում երկու տարին մի անգամ և առատորէն նպաստում են կառավարութիւնից:

Անթիւ են և հրացանաձիգ ընկերութիւնները (sociétés de tir), ամեն մի կանունի, ամեն մի համայնքի մէջ: Նրանք ևս ամեն կերպ խրախուսուում են կենտրոնական ու տեղական կառավարութիւնից: Կիրակի ու տօն օրերը գուր կը տեսնէք ամեն տեղ շվեյցարական բոլոր քաղաքներում այդ բազմաթիւ հրացանաձիգ խմբերը, որ կատարում են մի տեսակ նւիրական հանգիստը, մրցութեամբ իրենց մարզանքը, մի զւարթ ու արգասաւոր մրցութեան մէջ... Այդպիսով, հրաձգութիւնը դառնում է ամենուրեք ազգային նւիրական սովորութիւն. Նա մշակում ու պատրաստում է այն առաջնակարգ, աննման հրացանաձիգներին, որոնց հռչակը տարածւած է ամբողջ աշխարհ հում:

\*

Զինւորը բնաւ չի կորցնում քաղաքացու սովորութիւնները։ Զինւորական գպրոցից, պարբերական ու կարճատև կրկնութիւններից վերադառնալով, նա դարձեալ ամբողջապէս տրւում է իր քաղաքացիական պարտաւորութիւններին, պահելով միշտ իր մօտ, որպէս նւիրական սեփականութիւն, իր հրացանն ու այլ պարագաները։ Այդ վերջին հանգամանքի շնորհիւ, զօրաշարժը, մօրիկացիան Շվեյցարիայում կարող է կատարւել անհամեմատ աւելի աժամ, աւելի արագ և աւելի գիւրութեամբ, քան որևէ այլ եւրոպական պետութեան մէջ։ Ահազանգն ու զօրաշարժի հրաւերը լսելուն պէս՝ շվեյցարացին անմիջապէս հագնում է համազգեստը, առնում հրացանն ու պայուսակը և ուղերւում նշանակւած ժամադրավայրը… Երեք-չորս շաբթւայ ընթացքում փորիկ երկիրը իր ընդամենը Յ միլիոն ազգաբնակութեամբ կարող է ոսքի վրայ դնել չորս հարիւր-հազարաւոր պատկառելի մի բանակ։

Ոչ մի անհրաժեշտութիւն երկարատև ու տանջալի մարզանքների մէջ։ Ոչ մի կարիք՝ անջատելու զինւորաքարացուն իր օձախից ու պարապմունքներից, ահագին ժամանակամիջոցով։ Ո՞վ է ասում, թէ այդպիսի զօրքը անընդունակ է աջող պատերազմեր վարելու։ Ո՞վ կարող է հաստատել, թէ յաղթութեան ամենաէտական պայմանն է՝ ստեղծել անպատճառ միլիոնական տիպարգինւորին, կռել նրանց զօրանոցներում մեքենաների, աւտոմատների պէս, անդուը, սպանիչ և յարատե մարզակըներով… Պատմութիւնը տալիս է մեզ սքանչելի օրինակներ, երբ քաղաքացիական, ժողովրդական բանակները, թէկուզ նւազ զրահաւորւած ու մարզւած, բայց և իրենց պարտքի գիտակցութեամբ տոգորւած, յաղթել են յաճախ միլիոնական կազմակերպւած ու կարգապահ բանակներին։ Յիշենք գրանսիայի ժողովրդական

վաշտերը Մեծ Ցեղափոխութեան միջոցին, որ մի քանի անգամ յաղթական գրոհ տւին և ի վերջոյ յետ մղեցին ամբողջ բւնապետական Եւրոպայի զօրքերը Յիշենք Ամերիկայի անկախութեան համար պատերազմով բանակը, որ նոյնպէս տարաւ, նոյն 18-րդ դարի վերջերում, փայլուն, պատմական յաղթանակներ։ Յիշենք Ռուսաստանի 1812-ը, Բանապարտի արշաւի միջոցին. ապա Գարիբալդիի բանակները, նրանց գերը Խտակիայի ազգատագրական կոիւներում… Յիշենք, վերջապէս, հերոսական ազգային պաշտպանութիւնը (*la défense nationale*) Գրանսիայում, 1871 սարսափելի թւականին, Գամբետատայի հոգեոր հրամանատարութեան տակ… Ահա թէ ինչ է գրում այդ պատմական գրւագի մասին գերմանացի հոչակաւոր գեներալ Գն Դեր Գոլցը.

„Իր կամքի Ճիգերով (և շնորհիւ Գրեյսինէի պէս աշխատակիցների) Գամբետատան բոցավառեց մի անդին ու հոգետերկիր և մղեց նրան գեպի այնպիսի գիշադրաթիւն, վարը երկիր և մղեց նրան գեպի բնվայցքում կանգնեցրեց գերմանական զօրքերը։ Մենք ճանաչեցինք այդպիսով գոյսթիւնը ա յ ն պ ի ո ի ո ւ ժ ե ր ի, ո ր ո ն ց ա յ յ ո ր ի ո կ, առանց այդ փորձի, չ է ի ն ը գ ն ա տ ի ի ը ե ն ց արժեքով… Բաւական եղան նրան մի բանի շարաթ՝ դուրս բերելու բառուց կազմ ու պատրաստ մի բանակ<sup>\*)</sup>։

Ո՛չ անհրաժեշտ չէ պրօֆեսիօնալ զինւորամեքենաների սիստեմը։ Հայրենիքի պաշտպանութեան համար բաւական է և գերազանց է համաժողովրդական զինաւորութեան այն հաստատութիւնը, որ մենք այստեղ նկարագրեցինք։

Շվեյցարիան առաջինն է իրագործել ամենաբանաւոր և ամենաաժան, ամենաատնտեսական և ամենաարդար զօրասիստեմը, որ համեմատաբար շատ քիչ է ծանրա-

<sup>\*)</sup> Gaston Moch, L'Armée d'une Démocratie.

Նում աշխատաւոր ազգաբնակութեան պարանոցի վրայ  
և որ միանգամայն ի վիճակի է, հզօր ու կորովի դիմագրաւումով պաշտպանելու վասնգւելիք հայրենիքը:  
Նա չի յարմարեցւած յարձակողական նպատակների,  
Նւաճողական արշաւանքների համար—իրաւ է: Բայց  
այդ յատկութիւնը նրա ուժն է և ոչ թուլութիւնը.  
Նրա նախանձելի առաքինութիւնն է և ոչ արատը: Կա  
էապէս դեմօկրատական է, ժողովրդական: Այդ իսկ  
պատճառով նա չի կարող գործիք դառնալ այս կամ  
այն ընչափազց, արկածախնդիր անհատի, գասակարգի,  
կամայապետի ձեռքում՝ նիւթելու համար ժողովրդա-  
ջինջ պատերազմներ դրսում կամ յօրինելու հա-  
կածողովրդական, բռնաւորական վերիվայրումներ՝ ներ-  
սում, կամ թէկուզ ճնշելու, հարստահարելու աշ-  
խատաւոր խաւերը... Աշխարհը գնում է աստիճանա-  
բար դէպի խաղաղութիւն, ոչ դէպի պատերազմ. դէպի  
շինարար քաղաքակրթութիւն, ոչ դէպի զազիր ու վայ-  
րենի իրարասպանութիւն: Սօցիալիզմի, աշխատաւոր  
դասակարգերի յարաճուն ու սպառնագին գրոհի առջև,  
ամենագիշատիչ, ամենառազմասէր ուժերն անգամ հար-  
կագրւած են կամաց կամաց մեղմելու իրենց վագրային  
ախորժակները, համակերպելու տիեզերական խղճմտանքի  
հրամայական զօղանջին, լուծելու միջպետական վէճերն  
ու ընդհարումները խաղաղ անարիւն ճանապարհով.  
միջազգային իրաւախոչութիւններով, իրաւարար ատեան-  
ներով. և կը գայ ժամանակ—նա հեռու չէ—երբ այդ  
հսկայ, զրահաւորւած, արքայապաշտպան ու փողապաշտ-  
պան լէգէօնները միանգամ ընդմիշտ կը կորցնեն իրենց  
գոյութեան իրաւունքը և կը փոխարինեին համաժողո-  
վըրդական ու հայրենապաշտպան միլիսներով:

Ուշագրաւ է, որ անգամ իրենք պաշտօնական ձեռն-  
հաս ներկայացուցիչները կապիտալիստական իւրոպայի,

գեներալներ, սպաներ, հրապարակախօսներ, չեն թագ-  
նում իրենց հիացմունքը շվեյցարական զօրքի հանդէպ:  
Խրաբանչիւր տարի, զօրաշարժի ու զօրախաղի, մա-  
նենօվրների միջոցին գալիս են այլեւայլ երկրներից պաշ-  
տօնական պատւիրակներ՝ դիտելու, ուսումնասիրելու  
փոքրիկ Հելվետիայի ձեռք բերած գեղեցիկ նւաճում-  
ները զիւսորական արևեստի մէջ և ամենքը միաբերան  
գրւաստում են, փառաբանում \*)...

\*) Ահա թէ ինչպէս էր խօսում շվեյցարական զօրքի մա-  
սին պարիզեան „Temps“ լրագիրը 1890 թւին հրատարա-  
կած իր թղթակցի մի աշագրաւ յօւլածի մէջ.

Շվեյցարիան զօրքը մի հազարիւտ առաւելութիւն  
ունի, որ յարուցանում է միաժամանակ թէ ֆրանսիացի և  
թէ գերմանացի զիւսորական ըննադատաների խանդավառու-  
թիւնը: Թէ առաջինները և թէ վերջինները ծանրակիցու  
հիմքեր ունին՝ գնահատելու և զօրմանալի չէ, որ նրանք  
գալիս են նման եղբակացութիւնների:

Շվեյցարիան Դաշնակցութիւնը ցցյց է առախ ապշեցու-  
ցիչ օրինակի, թէ ինչ կարելի է անել առանձնայատուկ  
պայմաններում, ունենալով ամենահամեստ միջոցներ: Այդ  
համեմատաբար աղջքատ և թոյլ բնակչութիւն ունեցող եր-  
կիրը կարող է ուզած օրը սաքի հանել 200,000 զիւսոր և  
ծանապարհորդը հազիւ կը կարողանայ նշանակել արդ զօրքի  
ամենափոքրիկ հետքերն անգամ: Ասում ենք զօրք, թէ եւ  
իրօք նա միլիոնի անունն է կրում, որովհետեւ նրա  
անդամները երբէք չեն անցուցել կանոնաւոր զօրքերի հշտա-  
կան ու յարաւե ծառայութիւնը: Եւ այնուամենայնիւ, այդ  
մարդիկ իսկ սկան զիւսորներ են, քանի որ նրանց կեանքում,  
մանուկ հասակից գուրու, չի եղել և ոչ մի վայրկեան, երբ  
նրանք չը գտնւեին զիւսորական դիսցիպլինի ազգեցութեան  
տակ:

Չունենալով մշտական բանակ, շվեյցարացիք ունին, սա-  
կայն, հաստատութիւններ, որոնք կազմում են այդպիսի  
բանակի առօրեայ կեանքի անհրաժեշտ մասը: Ընորհիւ  
պարզ և միանդամայն օրսակտ կազմակերպութեան, նրանք  
քողում են այդ հաստատութիւններից բովանդակ օգուտը,

Եւ ո՞րպիսի ոգի, հայրենասիրական շունչ, ներդաշնակութիւն այդ ինքնատիպ զօրաշարքերում... Այդ կողմից ևս Հելվեցիայի օրինակը եղակի է: Կերդաշնակութիւնը այդանու գրափառ չի բռնագրւած, այլ միանգամայն բնական է, ինքնայրդոր, արդիւնք բարոյական, քաղաքացիական մի գերազանց դաստիարակութեան: Ամենքը, պարզ զինւորից մինչև ամենաբարձր աստիճանը, առողջութած են թանկադին հայրենիքի պաշտպա-

այնպէս որ առաջին ազգանշանը հնչելուն պէտք իսկական զօրքը գուրս է գալիս ասես գետնի տակից, պատրաստ կուելու նոյնքան արիութեամբ, ինչպէս կուել են իրենց նախնիքները: Արդեօք զա մի կատարելապէս համոզեցուցիչ ապացոյց չէ, թէ ինչ կարող են կատարել ինաւողութիւնը, լաւ կազմակերպութիւնը և սիստեմատիկ ձգտումը՝ քաղել վճռականութեամբ օժտւած մի ուժից այն բոլոր արդիւնքը, որ նա կարող է տալ:

Այդ գերազանց սիստեմը հիմւած է միլեցիական պարտադիր ծառայութեան վրայ: Բայց այստեղ այդ ծառայութիւնը, այնքան ծանր ուրիշ երկներում, դառնում է մի տեսակ հաճոյք, և երիտասարդ, առողջ շվեյցարացին կը համարէ իրեն խորապէս ստորացած, ոչնչաղած, եթէ նրան դասեին զինւորական ծառայութեան համար անպէտքների շարքը...

Չը պէտք է մոռանալ որ այդ սիստեմի մէջ մեր օրերում կարեսը գեր է խաղում մարդկանց բարի կամեցողութիւնը: Շվեյցարական երիտասարդութիւնը պատիւ է համարում՝ իր բարոյական պարտքը լիովին հասուցանելու հայրենիքին, նա միշտ պատրաստ է արձագանք տալ կենտրոնական իշխանութեան առաջին կոչեն... Այդ միլեցիայի ուժը կազմում է մարդկանց փոխազարձ հաւատն ու վստահութիւնը, — ոչ թէ մերենայտական հնագանդութեան ոգին դիսցիպլինի մէջ, այլ պարտքի կենդանի զգացումը: Այդպիսի պայմաններով միայն շվեյցարական զինւորական զեկովարները կարող էին վստահել ու պահ տալ ամեն մի առանձին զինւորի՝ զինք, ու աղմամթեքը ու հանգերձանքը: Վերջին պարտպան հիմքն է շվեյցարական մօրիլեզացիայի, զօրաշարժի, որ կարող է իսկա-

նութեան իդէալով և բոլորն էլ դիտում են իրար, որպէս եղբայրներ, պատրաստ մեռնելու ընդհանուր օճախի համար: Un pour tous, tous pour un — մէկը բոլորի, բոլորը մէկի համար: Դասալիքները, կարգապահութեան գէմ մեղանցողները արժանաւոր պատիւմ են ստանում և ենթարկւում ամբողջ երկրի ծաղր ու ծանակին...

Քարձրի ու ցածի խտրութիւնները գրեթէ չքանում են օֆիցիէրների ու զինւորների փոխադարձ պարզ մարդագայլը յարաբերութիւնների մէջ: Դասակարգերի համարեա ոչ մի խտրութիւն, աստիճանները տրում են համաձայն մարդկանց անձնական արժանիքներին: Ժողովուրդը և նրա ոգին ներկայ են բոլոր աստիճանների վրայ: ուամկավարական է զինւորական ամբողջ սանդուխը: Հեծելազօրքի շարքերում գուր կը հանգիպէք կողք կողքի նորբակազմ ու փափկասուն արիստօկրատին, աշխատաւոր ու անտաշ գիւղացուն, կառապանին, սափրիչին ևալին: Այդ ներդաշնակութիւնը աղդային հոյակապ բանակի մէջ ևս առաւել գրաւիչ է, երբ մտարերում էք, որ „ազգը“ այդտեղ, այդ երկնամբարձ լեռների մէջ կազմւած է երեք տարբեր աղ-

պէս հրաշք համարել իր արագութեամբ: Բաւական է արևած հրամանը, բաւական են հեռագիրները, որպէսզի միքանի օրւայ մէջ ամբողջ բանակը շարէշար կանգնի դրօշակիների տակի...

Տասնամեայ մանուկը, որ ձգտում է ստանալ գովորում մրցանակ հրացագութեան մէջ և ՅՈւամեայ վետերանը՝ նոյն նշանաբանն են կրում իրենց կրծքի տակ: Հայրենիքի չեզութիւն և անկախութիւն: Ահա թէ ինչն է ստեղծում այդ միլիոններից — ոչ թէ, ի հարկէ, զերազանց „զօրք“, բայց, անկասկած, լաւ ագույց ի նքն ապա շապան ու պան ու ժը, որ երբեկից գոյութիւն է ունեցել: այդ ուժը շափազանց վատանգաւոր կարող է լինել իւրաքանչեւոի համար, որ կը մտածէ յարձակում գործել նրա վրայ:

գու թիւններից—գերմանացի, ֆրանսիացի, իտալացի—և չորս թէ հինգ կրօններից... Ինչպէ՞ս է լինում այդ: Ըվելցարիայի բաղաքական և հասարակական սիստեմի գաղանիքն է դա, որ պարտաւոր են ընդօրինակել, իրենց յամրընթաց էւօլիցիայի մէջ, բոլոր այլացեղ ու այլ և բառբառ պետութիւնները և ամենից առաջ՝ Ռուսաստանն ու Թիւրքիան:

„Միլիտարիզմ“ չը կայ Ըվելցարիայում կամ հասցրւած է իր նւազագոյն աստիճանին: Մշտական զօրք չէք տեսնի, զինւորական շտաբն էլ (սպայակոյտ) կայ, բայց պարագի, ցոյցի համար չէ, այլ անհրաժեշտ ծառայութեան, գործավարութեան: Ոչ մի շուք ու փայլու պերճանք ու շուայլութիւն... Ծայրայեղ պարզութիւն ամենուրեք—ինչպէս վայել է մի ռամկավարութեան:

Եւ այդ օրինակելի տնտեսութիւնը զինւորական ծախքերի մէջ, խնայողական այդ վերաբերմունքը դէպի ժողովրդի հարստութիւնը՝ հնարաւորութիւն է տալիս լայնօրէն հոգալու ուրիշ անհրաժեշտ, կրթական ու քաղաքակրթական պէտքերը: Ինչպէս որ Ըվելցարիան բոլոր երկրների համեմատութեամբ ամենաքիչ ծախսողն է բանակի վրայ (ընդամենը 4 ֆրանկ մարդագլուխ \*), այնպէս և նա հանդիսանում է ամենաշատ ծախսողը կույտուր ական պէտք երի վրայ: Որքան ուրիշ երկրների մէջ ձամբարդի աշքին են զարնւում ամեն քայլափոխում կազարմաները, զօրանոցային աղմկալի մարզանըները, զինւորական ցուցամոլ շուքն ու ժխորը, նոյնքան Ըվելցարիայի մէջ ձեր ու շք ու միաքն են գրաւում, բեկուում, հմայում... անհամար ու հոյաշէն:

\*) Մինչդեռ իսպանական ծախսում է տարեկան ու մարդագլուխ—8 մրամկ, Ռուսաստան—10 մր. 25 ս., Գերմանիան—12. 45, Անգլիան—19. 25, Ֆրանսիան—20 մր. 80 ս.:

Դպրոցները „ռամկավարութեան այդ գերագոյն տաճարները“ (les temples de la démocratie) ինչպէս յաճախ անւանում են նրանց:

Այդպէս է „միլիցիայի“, չամաժողովրդական կան բանակի հայրենիքը: Դպրոց բաղաքակրթութեան և դպրոց իսկական, անաղարտ հայրենասիրութեան: Ամբողջ կեանքը մարզում են: Մարզանք հոգեկան, կուլտուրական, բայց նախ և առաջ՝ մարզանք Փիզիկական: Այդպէս է պահանջում հայրենիքի շահը, որ բոլոր շահներից գերագոյնն է... թէ պահպանողական-հանրապետականի, թէ պրօգրէսիստ-արմատականի և թէ տիեզերական հաւասարութեան ձգտող սօցիալիստի համար:

Փիզիկական մի հոյակապ մարզարան... Այդ երկիրը պէտք է օրինակ լինի միւսներին: Մենք շեշտեցինք նախորդ էջերում, որ անզէն ժողովուրդը նա որ գարշում է վառուցի հոտից և զինական մարզանքներից, մի սոսկ փալաս է ներկայ աշխարհում, մատնեած ի սաստակատագրի: Բայց զինւուր ու թիւնը դեռ բոլորը չէ: Զէնքը անհրաժեշտ է, բայց բաւական չէ: Մի ժողովուրդ պէտք է մարզի, դաստիարակւի առ առ ական առ աքի նու թիւնների մէջ — առ հասարակի: Նրա ֆիզիկական դաստիարակութիւնը պէտք է ընդունեի, իբրև առաջնակարգ մի պահանջ, իբրև գերագոյն պօստուլատ: Վահիա, թուլակազմ և հիւանդուժողովուրդները հաշիւ չեն տիեզերական արէօպագում... ձողովուրդը պէտք է առողջ լինի—Փիզիկապէս կարենայ աջողութեամբ առաջ մզել իր մտաւոր-կուլտուրական առաքելութիւնը:

Իսկ այդ անհրաժեշտ յատկութիւնները—առողջու-

Թիւն, առնականութիւն—կարելի է մշակել դարձեալ միայն միլիսների, համաժողովրդական բանակի մթնութեամ, ուր մարմամարզական արևեստը, իր բոլոր նրբութիւններով, վաղուց—արդէն մանուկ հասակից—ձանաչւում է, իբրև էական ու նւիրական պարապմունք:

Այդ առողջ ու փրկարար մեղօթները պէտք է այժմ կամաց-կամաց ճանապարհ բաց անեն նաև մեզ մօտ, օսմանեան, ուսու ու պարսկական իրականութեան մէջ. նրանք սկսել են արդէն արծարծւել Ռուսիայում: Պէտք է ձգտել ստեղծելու տմենուրեք քաղաքացիների առնական, կենսաթարմ ու կենսունակ սերունդներ, որ կարողանան ոչ միայն պիտանի գործիք լինել հայրենիքի պաշտպանութեան, այլ և տանել իրենց ուսերի վրայ քաղաքակրթեական, հոգեկան վերածնութեան գիւղարին գործը: Պէտք է սկսել պրօպագանդը յանուն մեծ քաղաքացիական բանակի, միլիցիայի:

Իդէալը, կրկնում ենք, գեռ հեռու է, բայց նա ուտօպիա չէ, ցնորք չէ: Ամեն մի մեծ նւաճում դիտւել է ժամանակին որպէս ցնորք—անխարիսխ ու անիրագործելի: Եթէ սրանից  $1\frac{1}{2}$  տարի առաջ մէկն ազգարարեր, թէ շուտով, վաղը պիտի կատարեի—մի բուռն կարիճների նախաձեռնութեամբ—օսմանեան երկրի վաղուց բաղացւած ու անբաւ ճիգերով պատրաստւած յեղափոխութիւնը—ամեն որ կը ինդար այդ մարգարէութեան վրայ, համարելով այն ցնորք, ուտօպիա:

Բայց իդէալներն իրագործում են էտապներով, հանգրւաններով: Միլիցիայի վեհ սկզբունքն ևս մէկէն ի մէկ իրագործելու բան չէ, այլ միայն աստիճան առ աստիճան: Միլիտարիզմի ահռելի Մողոբը, որ դարերով ձգել, տարածել ու աձեցրել է իր արմատները ազգաբնակութիւնների հոգեբանութեան մէջ,

տարաբախտաբար շուտ ու գիւրութեամբ չի կատարէ իր նահանջը: Հարկաւոր են բէֆօրմներ, լուրջ ու խորունկ բարենորոգումներ այն ուղղութեամբ, որ բնորոշեցինք: Զինւորական աստիճանների ու յարաբերութիւնների անհրաժեշտ ուամկավարացման հետ պէտք է կրծատել հետզիետէ զինւորական ծառայութիւնը, ինչպէս այդ արւում է աստիճանաբար քաղաքակրթւած երկրներում, ուամկավարութեան ճնշման տակ: Գրանսիայում եր կ ա մ ե ա յ ծ ա պ ա յ ո ւ թիւնը մտցւելուց յետոյ, այժմ մղում է պրօպագանդ յօգուտ մէկամեայ ծառայութեան: Աւելի ևս ուժեղ է մտքերի խմորումը ի նպաստ համաժողովրդական բանակի կամ միլիցիայի. և տարակոյս չը կայ, որ ոչ հեռու ապագայում, շնորհիւ ուամկավարական գաղափարների և ժողովրդապետութեան սրարշաւ առաջադիմութեան, մենք կը տեսնենք գրանսիայում շվեյցարական այդ սիստեմի իրագործւած: Գրանսիային կը հետեւին անխուսափելիօրէն միւս երկրները, որոնք բոլորն էլ, ինչպէս ցոյց տւինք մեր տեսութեան սկզբում, ապրում են ակամայօրէն միլիտարիզմի խեղդիչ կօշմարի տակ: Եզրափակենք մեր դատողութիւնները ֆրանսիական մինչանաւոր սպալի, գնդապետ Պատրիի մարգարէութեամբ.

”Երկամեայ զինւորական ծառայութիւնը, ասում է նա, կը տեէ, որքան կարող է. բայց մենք վաղ թէ ուշ անհրաժեշտաբար պիտի յանդինք Փրանսիայում, ինչպէս և բոլոր եւրոպական ազգութիւնների մէջ միլիսի կազմակերպութեան“ \*) (nous arriverons forcément à l'organisation des milices).

Եթէ մեր երկիրը յաւակնութիւն ունի մտնելու նոյն

\*) Gaston Moch, *L'Armée d'une Démocratie*.

„Եւրօպական ազգութիւնների“ աւազանը, ապա նա ևս,  
հարկադրաբար, պիտի ընթանայ նոյն էւլիւցիայի ճա-  
ռապարհով, նոյն մեթօդներով։ Կրկնում ենք, բոլոր  
երկրների—ուր առաւել Թիւրքիայի ու Ռուսաստանի  
համար—վաղուց պէտք է գոցւած համարել յար-  
ձակողական, նւաճողական արշաւանքների շրջանը. ժողովուրդների և ամբողջ մարդկու-  
թեան ու քաղաքակրթութեան շահն է այդպէս պա-  
հանջում—և նրանք տեղատեղ պատրաստ են արգել,  
ուրիշ տեղեր պատրաստում են՝ բռնգրելու և յար-  
գել տալու իրենց չափազանց իրաւացի տենչանքները..  
Ժողովուրդները—իրենց նիւթական, մտաւոր ու հոգե-  
կան զարգացման համար—բաղձում են ամենուրեք  
խաղաղութեան, մեր տարաբախտ, արիւնաքամ ժողո-  
վուրդները—առաւել ևս։ Բայց մեղք, թուլամորթ խա-  
ղաղութիւնը չէ, որ պիտի քաջալերենք ու քարոզենք,  
այլ այն խաղաղութիւնը որ օժտւած է հանուր, եր-  
կաթէ զինաւորութեան անխոցելի պարիսպներով, որ  
գիտէ յարգել տալ ինքզինքը աշխարհի բռնատենչ  
ախորժակների կրկեներում.. Պէտք է յար և միշտ  
արծարծել միլիցիայի, համաժողովրդական բանակի, հա-  
մաժողովրդական մարզումի գաղափարը, որ հար-  
ւածելով միլիտարիզմի չարիքներին, նւազեցնելով զինա-  
ւորութեան ծախքերը, բարձրացնելով երկրի անտեսու-  
թեան ու հարստութեան մակերեսոյթը, ուամկավարա-  
ցնելով աստիճանաբար զինաւորական բանակը, պիտի  
նպաստէ հզրապէս թարմ, առողջ սերունդների առա-  
ջացման, պիտի կապէ միաժամանակ—սերտ, համերաշխ  
կապերով. ինչպէս Ալպեան չքնաղ հայրենիքում—մեր  
երկրների այլացեղ ու այլալեզու ազգութիւններին,  
յանուն ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան ու  
բարգաւաճման

## ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿ

### I

#### ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ՊԱՏՈՒՀԱՍՐ

Երես

Նոր օրենքը Տամասանում.—Զօրք 11 հայրենիք.—Դէսի ասի-  
նանական ռամկախացում.—Միլիտարիզմը Արեւմուսում և  
Թիւրքիայում. — Զինաւորան համանարկ տեսդր, Եսա պա-  
հանները. — Սպառազէն խաղաղութիւն. — Ժամանակակից  
զօրքը, իբրև կազիտալզմի շաների նեցուկ. . . . . 1—16

### II

#### ԿՆՃՈՒ ԼՈՒՇՈՒՄՆԵՐԸ

Պատօնական լուծում.—Զինբնիկցութեան ծրագիրները եւ երանց  
արդինիք. — Յարական նախաձեռնութիւնը և Հազի խանքր-  
գամողով. — Բուռյուա-խաղաղախրական նոսանիք. — Բուն  
ռամկախացական լուծումը. — Աշխատաւորական ենթենացիօ-  
նալը եւ պատերազմը. — Սօցիալիզմ եւ միլիտարիզմ. — Երազու-  
ծելին, ոչ ցեղականը. — Ժողովուրդները չը պէտք է զինա-  
ւորափին. — Համաժողովրդական բանակը իբրև գրկութեան  
խարիսխ. . . . . 17—24

### III

#### ՇՎԵՅՅԱՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Զօրքը օվեյցարական համապետութեան մէջ. — Զինուուրակա-  
նացի. — Մազմական ծիրեր-մի աւանդ նախնիներից. — Լող  
Սօլորիւրին՝ օվեյցարացիների ու հայերի մասին. — Զինուու-  
կան ծառայութիւնը՝ մի մասը բնինանուր կրական սիս-  
տմի. — Մարմանարական եւ երացանձիգ մնելուուրիներ. —  
Ժողովրդական ունիչը ամբողջ բանակի մէջ. — Հայրենիքի պա-  
հանները. — Ծիլցուրիան—տիպար-օրինակ՝ ամբողջ աշխարհի,  
նաև մեզ նաև. . . . . 25—44



“Եւրօպական ազգութիւնների” աւազանը, ապա նա ևս,  
հարկադրաբար, պիտի ընթանայ նոյն էւզլիցիայի ճա-  
ռապարհով, նոյն մեթօդներով։ Կրկնում ենք, բոլոր  
երկրների—ուր առաւել Թիւրքիայի ու Ռուսաստանի  
համար —վաղուց պէտք է դոցւած համարել յար-  
ձակողական, նւաճողական արշաւանքներ։ Տարի շրջանը ժողովուրդները և ամբողջ մարդկու-  
թեան ու քաղաքակրթութեան շահն է այդպէս պա-  
հանջում—և նրանք տեղատեղ պատրաստ են արդէն,  
ուրիշ տեղեր պատրաստում են՝ բռնադրելու և յար-  
գել տալու իրենց չափազանց իրաւացի տենչանքները...  
Ժողովուրդները—իրենց նիւթական, մտաւոր ու հոգե-  
կան զարգացման համար —բաղնում են ամենուրեք  
խաղաղութեան, մեր տարաբախտ, արիւնաքամ ժողո-  
վուրդները—առաւել եօ։ Բայց մեղկ, թուլամորթ խա-  
ղաղութիւնը չէ, որ պիտի քաջալերենք ու քարոզենք,  
այլ այն խաղաղութիւնը, որ օժտւած է հանուր, եր-  
կամէ զինաւորութեան անխացելի պարիսպներով, որ  
գիտէ յարգել տալ ինքզինքը աշխարհի բունատենչ  
ախորժակների կրկեսներում... Պէտք է յար և միշտ  
արժարծել միլիցիայի, համաժողովրդական բանակի, հա-  
մաժողովրդական մարզումի գաղափարը, որ հար-  
ւածելով միլիտարիզմի չարիքներին, նւազեցնելով զինա-  
ւորութեան ծախքերը, բարձրացնելով երկրի անտեսու-  
թեան ու հարստութեան մակերեսոյթը, ուամկավարա-  
ցնելով աստիճանաբար զինուրական բանակը, պիտի  
նպաստէ հզրապէս թարմ, առողջ սերունդների առա-  
ջացման, պիտի կապէ միաժամանակ—սերտ, համերաշխ  
կապերով, ինչպէս Ալպեան չքնաղ հայրենիքում—մեր  
երկրների ալլացեղ ու ալլացեղու ազգութիւններին,  
յանուն ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան ու  
բարգաւաճման

## ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿ

### I

#### ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ՊԱՏՈՒՀԱՍԸ

Երես

Նոր օրենքը Տանկառանում—Զօրք 1 նայրենիք.—Դէպի ասի-  
նանական ուսմանարացում—Միլիտարիզմը Արեւուսէնում և  
Թիւրքիայում—Զինանում համանակ տենդը, նրա պա-  
հանուները—Սպառազին խաղաղութիւն—Ժամանակակից  
զօրքը, իրեւ կապիտալիզմի շաների նեցուկ. . . . . 1—16

### II

#### ԿՆՃՈՒ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ


Պատօնական լուծում—Զինքնիցուրեան ծրագիրները եւ Երանց  
արդիւմը—Յարական նախաձեռնուրիւնը եւ Հասզի խորհր-  
դանողոյնը—Բուրյուա-խաղաղախրական նոսանքը—Բուն  
ուսմանարանի լուծումը—Աշխատաւորական Խնեմացիո-  
նալը եւ պատեազմը—Սօցիալիզմ եւ միլիտարիզմ—Երազոր-  
ծելին, ոչ ցնորականը—Ժողովուրդները չը պէտք է զինա-  
րափիմ—Համաժողուրդական բանակը իրեւ փրկութեան  
խարիսխ. . . . . 17—24

### III

#### ՇՎԵՅՅԱՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Զօրքը սվեյցարական նամակաթուրեան մէջ—Զինուր-հազա-  
րացի—Մազմական ձիթք—մի տանգ նախնիներից—Լող  
Սօլքիւրին՝ սվեյցարացիների ու նայերի մասին—Զինուր-  
կան ծառայութիւնը՝ մի մասը բնդուստուր կրական սիս-  
տեմի—Մարմանարական եւ երազանձիգ բնկեռութիւններ—  
Ժողովրդական ունից ամբողջ բանակի մէջ—Հայրենիքի պա-  
հանուները—Նիւյուրիան—Տիպար-օրինակ՝ ամբողջ աշխատին,  
նաև մեզ նամար. . . . . 25—44





ՀՀ Ազգային գրադարան



NL0221670

41.355

ԳԻՆՆ Է 30 ՍԱՆՑԻՄ